ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2026Թ. ՄԱՅԻՍԻ 4-9-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԼԱՅՊՑԻԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Լայպցիգ), 2026թ. մայիսի 4-9

3. Հրավիրող կողմը

Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարություն,
Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն 2026թ. մայիսի 6-8-ը կայացած Միջազգային տրանսպորտի ֆորումի տարեկան գագաթնաժողովին, ինչպես նաև մայիսի 5-ին DEKRA-ի (տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն և սերտիֆիկացում իրականացնող կազմակերպություն) կողմից կազմակերպած աշխատանքային քննարկմանը:

5. Քննարկված թեմաները

- Տրանսպորտային համակարգերի դիմակայաունության բարձրացում՝ կլիմայական, աշխարհաքաղաքական, կիբեռանվտանգության և տնտեսական ռիսկերի պայմաններում,
- Միջազգային տրանսպորտային կապերի զարգացում,
- Տրանսպորտային ենթակառուցվածքների ֆինանսավորման նոր մեխանիզմներ,
- Միջազգային բեռնափոխադրումների թվայնացում,
- Վարչարարության պարզեցում,
- Քաղաքային տրանսպորտի արդյունավետ և ներառական զարգացում,
- Ներդրումային և ֆինանսական գործիքների կատարելագործում,
- Պետություն-մասնավոր գործընկերության ընդլայնում,
- Լոգիստիկ շղթաների կայունության ապահովում,
- Տրանսպորտային կառավարման նորարարություններին և համագործակցությանը վերաբերող հարցեր և այլն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ս.թ. մայիսի 5-ին մասնակցել եմ ճանապարհային անվտանգության ոլորտում միջազգային ճանաչում ունեցող DEKRA ընկերության կողմից ՀՀ ՏԿԵ նախարարության ներկայացուցիչների համար կազմակերպած աշխատաժողովին /աշխատանքային քննարկում/, որի ընթացքում ներկայացվել է ընկերության գործունեությունը և այլ երկրներում ներկայացվածության աշխարհագրությունը: Այցելել ենք տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն իրականացնող կայաններ, որտեղ ծանոթացել ենք տեխնիկական զննության գործընթացի գերմանական փորձին, կադրերի պատրաստման քաղաքականությանը, տեխնիկական և ծրագրային հագեցվածությանը և այլն:

Նույն օրը մասնակցել եմ նաև GIZ-ի կողմից ԱլԳ երկրներում իրականացվող տրանսպորտային ենթակառուցվածքների ծրագրի արդյունքներին նվիրված քննարկմանը:

Մայիսի 6-ին ՀՀ ՏԿԵՆ ներկայացուցիչների հետ միասին մասնակցել եմ Միջազգային տրանսպորտային ֆորումին, որն այս տարի կրում էր Funding Resilient Transport խորագիրը: Գագաթաժողովն այս տարի անցկացվում էր Ադրբեջանի նախագահությամբ:

Գագաթաժողովի ընթացքում քննարկվել են տրանսպորտային համակարգերի դիմակայունության բարձրացման, վերջինիս համար անհրաժեշտ ֆինանսավորման և ներդրումային մեխանիմների ձևավորման, գլոբալ ռիսկերին արձագանքելու կարողությունների (թվայնացում, կլիմա, աշխարհաքաղաքական իրավիճակ) հետ կապված հարցեր:

Ընդգծվեց միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության ընդլայնման կարևորությունը, տրանսպորտային ենթակառուցվածքներում ներդրումների արագացման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը, սահմանային ընթացակարգերի պարզեցման անհրաժեշտությունը և այլն:

Նույն օրը տեղի են ունեցել երկկողմ ձևաչափով մի շարք հանդիպումներ, մասնավորապես՝

- ***Հանդիպում DEKRA-ի կառավարման խորհրդի նախագահ Շտան Զուրկիևիչի և գործադիր փոխնախագահ Քրիստոֆ Նոլթի հետ*** – ամփոփվեցին նախօրեին

տրանսպորտային ֆորումի տարեկան հաշվետվությունը: Ելույթներով հանդես եկան մի շարք երկրների ներկայացուցիչներ, այդ թվում նաև ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանը՝ ներկայացնելով ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ նախաձեռնություն»-ը:

Նախարարական կլոր սեղանի (MRT 1: Strategic Investment in Supply Chain: Strengthening Alternative Roues and Corridors) շրջանակներում, որպես պանելիստ, ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության մոտեցումները դեպի ծով ելք չունեցող երկրների առջև ծառացած մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև թվայնացման առանցքային դերը կայուն և մրցունակ տրանսպորտային համակարգի ձևավորման համար:

Բաց նախարարական նստի ընթացքում ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանը արձագանքել է Թուրքիայի տրանսպորտի նախարարի ելույթին, որտեղ առկա էր «Զանգեզուրի միջանցք» ձևակերպումը:

Երկկողմ ձևաչափով հանդիպում ենք ունեցել UBER ընկերության ներկայացուցիչ Ռոլանդ Վերների հետ և քննարկել հնարավոր համագործակցության, ինչպես նաև Հայաստանում ընկերության գործունեության հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

<u>7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

ITF Փակ նախարարական նիստի ընթացքում ընդունվեցին հետևյալ փաստաթղթերը՝

- Միջազգային բեռնափոխադրումների փոխկապակցվածության թվայնացման վերաբերյալ փաստաթուղթը,
- Քաղաքային տրանսպորտի զարգացման վերաբերյալ փաստաթուղթը:

Հաստատվեցին հետևյալ երկրների՝ ITF-ին անդամակցության հայտերը՝

- Գանա,
- Պերու,
- Պանամա:

Հաստատվեցին ITF հաջորդ նախագահող երկրները՝

- Թուրքիա /2027-2028/,

տեղի ունեցած աշխատանքային քննարկման արդյունքները: Քննարկվեցին նաև DEKRA—ի հետ հնարավոր համագործակցության մոդելները, ինչպես նաև Հայաստանում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության բարեփոխումների և ընկերության հնարավոր ներկայացվածության ու միջազգային չափանիշներին համապատասխան տեխիկական զննության կայան կազմակերպելու վերաբերյալ հարցեր:

- ***Հանդիպում Ուկրաինայի համայնքների և տարածքների զարգացման նախարարի տեղակալ Սերգի Դերկաչի հետ*** – հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև ավտոմոբիլային փոխադրումների դյուրացման և համագործակցության խորացման վերաբերյալ հարցեր, մասնավորապես՝ ուկրաինական կողմը խնդրեց ավելացնել բեռնափոխադրումների համար տրվող թույլտվությունների քանակը և առաջարկեց դիտարկել թույլտվությունների համակարգը ազատականացնելու հարցը: Ուկրաինական կողմը ներկայացրեց բեռնափոխադրումների անցակետերում հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգը: Պատրաստակամություն հայտնեցին Ծրագրի բազան անվճար տրամադրել նաև ՀՀ-ին՝ տեղում ադապտացնելու համար:
- ***Հանդիպում Մոլդովայի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչների հետ*** - հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև ավտոմոբիլային փոխադրումների դյուրացման և համագործակցության խորացման վերաբերյալ հարցեր, այդ թվում՝ մոլդովական կողմն առաջարկել է վերանայել 2 երկրների միջև առկա համագործակցության հուշագիրը՝ կարգավորումների փոփոխությունից հետո առաջացած խնդիրներին լուծում տալու համար:
- ***Հանդիպում Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տրանսպորտի հարցերով մենեջեր Շոմիկ Մեհնդիրատտայի հետ*** – քննարկվել են ենթակառուցվածքային զարգացման ծրագրերին առնչվող հարցեր, մասնավորապես ՀԲ աջակցությունը տեխնիկատնտեսական վերլուծությունների փուլում:

Մայիսի 7-ին կայացած Տրանսպորտի նախարարների խորհրդի /Փակ նախարարական նիստ/ ժամանակ ITF գլխավոր քարտուղար Յ. Թ. Կիմը ներկայացրեց Միջազգային

- Ճապոնիա / 2028-2029/:

Երկկողմ հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները՝

- Պայմանավորվածություն ձեռք բերվեց 1998թ. մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի Հանրապետության կառավարության միջև ավտոտրանսպորտային հաղորդակցության մասին» համաձայնագրի 22-րդ հոդվածի համաձայն այս տարի Ուկրաինայում անցկացնել Խառը հանձնաժողովի նիստ:
- Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2026թ. ընթացքում Հայաստանի և Մոլդովայի տրանսպորտի ոլորտի խառը հանձնաժողովի առաջին նիստը կազմակերպելու վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվում է ակտիվացնել աշխատանքները միջազգային բեռնափոխադրումների թվայնացման գործընթացներում, իրականացնել կայուն և ներառական տրանսպորտային քաղաքականություն, զարգացնել միջազգային և միջտարածաշրջանային տրանսպորտային կապերը, ինչպես նաև բարձրացնել տրանսպորտային անվտանգությանն մակարդակը Հայաստանում:

Վերոնշյալի իրականացման արդյունքում ակնկալվում են մի շարք բարեփոխումներ ՀՀ-ում տրանսպորտի կայուն կառավարման ոլորտում, ինչի վերաբերյալ ձեռք են բերվել պայմանավորվածություններ Ֆորումի շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նունուֆար Ստեփանյան

13.05.2026թ.